## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՐ ԶՈՐԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՀՈՒՍԵՅՆ ԱՌՆԱՍԻՆ

Հոկտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Դեր Զորի նահանգապետ Հուսեյն Առնասին:

Նորին Սրբությունը, ողջունելով նահանգապետի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, վերհիշեց 2001 թ. իր այցը Դեր Զոր: Անդրադառնալով հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամությանը՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալական զգացումով նշեց Սիրիայի ժողովրդի ու իշխանությունների հոգատար վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ: Նորին Սրբությունը երախտագիտությամբ ընդգծեց նաեւ, որ 1915 թ. Մեծ եղեռնի փարիներին ցեղասպանությունից մազապուրծ շատ հայորդիներ իրենց ապաստանն են գտել արաբ ժողովրդի մոտ: «Թող Աստված երկնքից խաղաղություն իջեցնի ձեր աստվածասեր ժողովրդի վրա, խաղաղություն, որը խարսխված է արդարության վրա: Մենք միշտ կհիշենք մեր հանդիպումները, որոնք ոչ միայն ուրախության, այլեւ երախտագիտության զգացում են առաջացնում մեր մեջ հանդեպ Սիրիո ժողովրդի: Եկեղեցու օրհնությունը հովանի լինի ձեզ վրա եւ շնորհազարդի բարի գործերի համար: Այդ օրհնությունն անկասկած պիտի ավելի պտղաբերի եւ արդյունավորի ձեր ընթացքը», - իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց նաեւ Սիրիայի նախագահ Բաշար Ալ Ասադին:

Մեծարգո նահանգապետն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 12-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սլովենիայի Հանրապետության նախագահ Դանիլո Թյուրկին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Ողջունելով Սլովենիայի նախագահի այցը Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, անդրադարձավ պատմական դժվարին շրջաններին եւ հոգեւոր կյանքի ներկայիս զարթոնքին: Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նաեւ գոհունակություն հայտնեց Հայաստանի եւ Սլովենիայի միջեւ հարաբերությունների հաստատման առիթով՝ մաղթելով, որ ժամանակի ընթացքում դրանք ավելի ջերմանան եւ արդյունավորվեն սերտ համագործակցությամբ: Երկրների միջեւ համագործակցության ձեւավորման առնչությամբ Վե-



Դեր Զորի նահանգապետ Հուսեյն Առնասը Վեհարանում